ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար «ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-26/8» ծածկագրով, էլեկտրական մեքենաների լիցքավորման ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման/ գնահատող հանձնաժողովի/ նիստի

ք. Երևան

Մեկնարկ՝ «04» « հունիսի » 2026թ.
Ժամը՝ 10:00
Ավարտ՝ «08» « հունիսի» 2026թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Պատասխանատու ստորաբաժանման/ գնահատող հանձնաժողովի ղեկավար՝
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության կազմատնտեսական բաժնի պետ — **Ս. Սայադյան**

անդամ՝
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության խորհրդական՝ առանձին գործառույթներ համակարգող — **Ա. Երվանդյան**

Գնման ընթացակարգի համակարգող/հանձնաժողովի քարտուղար՝
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ — **Ա. Գրիգորյան**

1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնի վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմաբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության առավելագույն գինը՝ մեկ թվով արտահայտված

Չափաբաժնի		Չափաբաժնի անվանումը
համարը	առավելագույն գնման գինը	
1	180 000	էլեկտրական մեքենաների լիցքավորման ծառայություններ

2. Տեղեկություն՝ Ընթացակարգի հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի վերաբերյալ

2.1 Ընթացակարգի շրջանակներում սահմանված կարգով և ժամկետում հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

№	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն	ՀՎՀՀ	Էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար
1	«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ	ք.Երևան, Ազատության 24/1	02500052	info@telecomarmenia.am +374 10700700
2	«ԷՎԱՆ» ՍՊԸ	ք.Երևան, Բագրևանդ 21/1	02843803	info@e-evan.com +374 44 804 803

3. Տվյալներ՝ Ընացակարգի հայտերը կազմելու և ներկայացնելու՝ Հրավերով սահմանված պայմաններին համապատասխան լինելու մասին

3.1 Մասնակիցների հայտերում հրավերով սահմանված պահանջները համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ՝

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտում՝

- Էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների ցանկը չի համապատասխանում հրավերի հավելված 3-ով սահմանված պայմանագրի թիվ 1 հավելվածի պահանջներին, համաձայն որի **Մասնակիցը Երևանում և ՀՀ բոլոր մարզերում պետք է ունենա լիցքավորման կայաններ:**

«ԷՎԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում՝

- Էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների ցանկը չի համապատասխանում հրավերի հավելված 3-ով սահմանված պայմանագրի թիվ 1 հավելվածի պահանջներին, համաձայն որի **Մասնակիցը Երևանում և ՀՀ բոլոր մարզերում պետք է ունենա լիցքավորման կայաններ:**

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով և հիմք ընդունելով արձանագրված անհամապատասխանությունները՝ Ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստը 04.06.2026թ. մեկ աշխատանքային օրով կասեցնել և առաջարկել «Տելեկոմ Արմենիա» ԲԲ և «ԷՎԱՆ» ՍՊ ընկերություններին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:
2. Գնահատող հանձնաժողովի նիստը վերսկսել ս.թ. հունիսի 8-ին՝ ժամը 10:00-ին:

4. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին

4.1 Ընդունել ի գիտություն, որ «Տելեկում Արմենիա» ԲԲ և «ԷՎԱՆ» ՍՊ ընկերությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ներկայացրել են շտկումներ:

4.2 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով գնահատման արդյուքները հանձնաժողովը որոշեց «Տելեկում Արմենիա» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար, իսկ «ԷՎԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար:

5. Տվյալներ՝ Ընթացակարգի յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի վերաբերյալ

5.1 Գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Ծառայության անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/	1 կՎտ/ժ արժեք (առանց ԱԱՀ)
1		*2*	*3*	*4*	*5=3+4*	*6*
1	«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ	Էլեկտրական մեքենաների լիցքավորման ծառայություններ	150 000	30 000	180 000	100
2	«ԷՎԱՆ» ՍՊԸ	Էլեկտրական մեքենաների լիցքավորման ծառայություններ	150 000	30 000	180 000	100

5.2 Մասնակցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են /ճիշտ է/:

6. Ընթացակարգի արդյունքների հաստատման (արդյունքների ամփոփման) մասին:

Պատասխանատու ստորաբաժանում/գնահատող հանձնաժողովը/ որոշեց՝

6.1 Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածով՝ Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝ **«Տելեկոմ Արմենիա»** ԲԲԸ-ին:

6.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

6.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

6.4 Ընթացակարգի ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ հաշվի առնելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Որոշումն ընդունվել է կողմ՝ 2, դեմ՝ 0

Պատասխանատու ստորաբաժանման/
գնահատող հանձնաժողովի

ղեկավար՝ Ս. Սայադյան .....

անդամ՝ Ա. Երվանդյան .....

Գնման ընթացակարգի համակարգող /հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան .....